2018թ.-ի ապրիլի 14-ին Գաֆէսճեան արվեստի կենտրոնում բացվեց «Ճանճ» ցուցադրությունը: Ցուցահանդեսի շրջանակներում ներկայացվեցին հայտնի հայ դիզայներ և նկարիչ Արման Նուռի այն աշխատանքները, որոնք 2017թ.-ի Ֆլորենցիայի ժամանակակից արվեստի համաշխարհային բիենալեում առաջին մրցանակին արժանացան՝ շահելով «LORENZO IL MAGNIFICO» ոսկե մեդալը:

Արման Նուռը բազմակողմանի ստեղծագործող է՝ քանդակագործ, նկարիչ, դիզայներ և ոսկերիչ: Միևնույն ժամանակ, նրա բոլոր աշխատանքներին, անկախ ձևից, հատուկ է թաքնված իմաստն ու փիլիսոփայական ենթատեքստը: Ճանճերը («Ճանճ», «Էվոլյուցիա»), որոնց կերտել է արվեստագետը, բացառություն չեն: Այս մեծ ու փոքր ինտերակտիվ ստեղծագործությունները դիտողին տեղափոխում են մեկ այլ, զուգահեռ իրականություն, որտեղ մարդն իրեն զգում է ուրիշ հարթությունում և ի զորու է վերաիմաստավորելու իրականությունը, նոր լույսի ներքո ընկալելու շրջակա աշխարհը:

Այս ցուցադրության համար Արման Նուռը նաև ընդլայնել է ներկայացված աշխատանքների գեղարվեստական սահմանները: Ճանճին հատուկ անկառավարելի հետագիծը արվեստագետը դարձրել է արտահայտչամիջոց՝ մեկ գծով ստեղծելով Երևան քաղաքի համայնապատկերը, ինչպես նաև անիմացիոն ֆիլմ: Նման ձևաչափով այս աշխատաքներն առաջին անգամ ցուցադրվեցին Հայաստանում և սկսեցին իրենց համաշխարհային շրջագայությունը:

Ցուցադրությունը հնարավորություն է ընձեռում այցելուներին ոչ միայն ծանոթանալու Արման Նուռի միջազգային հաջողություններին, այլև նորովի դիտարկելու մարդ-բնություն հարաբերությունները սիրո պրիզմայով:

Գաֆէսճեան արվեստի կենտրոն

On April 14, 2018, The Fly exhibition opened at the Cafesjian Center for the Arts. In the scope of the exhibition, artworks by the famous Armenian artist and designer Arman Nur were presented, which were awarded the "LORENZO IL MAGNIFICO" gold medal at the Florence International Biennale of Contemporary Art in 2017.

Arman Nur is a consummate artist; sculptor, painter, designer and jeweler. There is a hidden idea and philosophical subtext in all his works. The flies (The Fly, Evolution) created by the artist are no exceptions. These interactive pieces transfer the viewer to a parallel reality, where one finds oneself on another level and is able to reconsider reality, perceiving the surrounding world in a new light.

For this exhibition Arman Nur has expanded the artistic borders of his work. He has created a one-line painting with the silhouette of Yerevan and a special animation tracing the trajectory of a fly. In these formats the artworks are presented for the first time in Armenia, where their world tour begun.

The exhibition offers an opportunity for visitors, not only to become aware of the worldwide success of Arman Nur, but also to look anew at the relationship of mankind and nature through the prism of love.

Cafesjian Center for the Arts

CAFESJIAN
CENTER FOR THE ARTS




# ՖԼՈՐԵՆՑԻԱՅԻ ԲԻԵՆԱԼԵ 2017

Հայտնի հայ դիզայներ Արման Նուռը այս ամենահեղինակավոր մրցույթում՝ Ֆլորենցիայի բիենալեում, գրավեց առաջին տեղը՝ նվաճելով «LORENZO IL MAGNIFICO» ոսկե մեդալը:

Ֆլորենցիայում անցկացվող ժամանակակից արվեստի համաշխարհային բիենալեն արվեստի աշխարհում գլխավոր իրադարձություններից է:
Այն տեղի ունեցավ հոկտեմբերին Ֆորտեցա դա Բասո ամրոցում: Ցուցադրությանը ներկայացված էին կերպարվեստի գրեթե բոլոր տեսակները՝ գեղանկար, քանդակ, գրաֆիկա, լուսանկար, ինստալացիա, վիդեո-արթ, ոսկերչություն, թվային-արվեստ և այլ խառը տեխնիկայի ստեղծագործություններ:
2017-ի Բիենալեին մասնակցում էր 417 արվեստագետ՝ ավելի քան 72 երկրներից:

# FLORENCE BIENNALE 2017

The famous Armenian artist Arman Nur was awarded "LORENZO IL MAGNIFICO" golden medal at the Florence Biennale 2017- the most prestigious International Biennale of Contemporary Art.

The International Florence Biennale of Contemporary Art is the main event in the art world. The Biennale took place at October in Fortezza da Basso fortress. All the main forms of visual art have been presented at the exhibition, such as: digital art, video art, photography, installation, performing arts as well as painting, drawing, calligraphy, mixed media, sculpture, ceramic art, textile and fiber and jewellery art. 417 artists from more than 72 countries participated at the biennale.




XI BIENNALE INTERNAZIONALE
D'ARTE CONTEMPORANEA DI FIRENZE

**1° Premio**

**GIOIELLO D'ARTE/JEWELLERY ART**

*Firenze, 15 Ottobre 2017*

# ՃԱՆՃ

Այսօր, ինչպես և բոլոր ժամանակներում ՄԱՐԴԿՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԻՔ ՈՒՆԻ փոխըմբռնման ու գթասրտության, ՆԵՐՈՂԱՄՏՈՒԹՅԱՆ ՈՒ ՍԻՐՈ: Ամեն սերունդ երազում է, որ հենց իր ժամանակներում է մարդկությունը ԱՊՐԵԼՈՒ առանց պատերազմների, ԱՌԱՆՑ ՀԱԿԱԿՐԱՆՔԻ ՈՒ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ: Ճանճը փոքրիկ էակ է՝ տարածված ամբողջ աշխարհում և չսիրված մարդկանց ու կենդանիների մեծամասնության կողմից: Գուցե՞ հենց այս կպչուն էակը կօգնի մեզ համընդհանուր հասկացություններին այլ կերպ նայել: Այսպիսով, ՈՐՊԵՍԶԻ ԿԱՐՈՂԱՆԱՆՔ ՀԱՍԿԱՆԱԼ, ՆԵՐԵԼ ՈՒ ՍԻՐԵԼ այն, ինչը մենք ատում ենք՝ լինի դա ճանճ, մարդ, թշնամի, թե՝ցանկացած այլ հասկացություն, մենք պետք է աշխարհին նայենք նրա աչքերով, ում ատում ենք: Չէ՞ որ իր աչքերում և ինքն իր համար այն ճիշտ է, ամենալավն է, մաքուր է ու խելացի և սիրում է ինքն իրեն: Եվ որպեսզի մենք էլ կարողանանք հասկանալ ու սիրել ՊԵՏՔ Է ՆԱՅԵՆՔ աշխարհին ԱՏԵԼԻԻ ԱՉՔԵՐՈՎ, մի պահ դառնանք ճանճ ու ներենք նրան, ՀԱՍԿԱՆԱՆՔ նրա ՏԵՍԱԿԵՏԸ և հնարավոր է, որ սիրենք նրան, չէ՞ որ ճանճն էլ կենդանի արարած է՝արժանի գոնե մի փոքր սիրո: Եթե վերցնեք այս աշխատանքը և վերածեք այն ակնոցի ու կրեք՝ դուք կկարողանաք աշխարհին նայել ճանճի կենսաբանական տեսողությամբ:

# THE FLY

Today, as well as at all times, HUMANITY NEEDS mutual understanding, mercy, FORGIVENESS AND LOVE. Every generation dreams that this will happen in their particular time when people will LIVE IN THE WORLD without wars, WITHOUT REPULSION AND HATRED. The fly is a small creature, spread all over the world, and hated by the overwhelming majority of people and animals. Perhaps it is this small, intrusive creature that will help us look at the generally accepted concepts otherwise? So, IN ORDER TO UNDERSTAND, TO FORGIVE and TO LOVE what we hate, be it a fly, a person, an enemy or any concept, it's worth looking at the world through the eyes of the one we hate. After all, in its own eyes and for itself, the fly is right, it is the best, it is cleaner, smarter, and loves itself. And for us too, to be able to understand and love, WE NEED TO SEE the world THROUGH THE EYES OF THE HATED ONE, become a fly for a moment and forgive her, UNDERSTAND HER POINT OF VIEW and maybe love her, because the fly is also a living creature worthy of at least a little love. Taking this work and turning it into spectacles, putting them on yourself you can look at the surrounding world with a biologically recreated sight of a fly.









ՄԱՐԴԿՈՒԹՅՈՒՆԸ

HUMANITY











ԿԱՐԻՔ ՈՒՆԻ
ՆԵՐՈՂԱՄՏՈՒԹՅԱՆ
ՈՒ ՍԻՐՈ

NEEDS
FORGIVENESS
AND LOVE













Էվոլյուցիա, 2017
Երկաթ, բրոնզ,
պլեքսիգլաս
250 x 230 x 120 սմ

Evolution, 2017
Iron, bronze, plexiglas
250 x 230 x 120 cm


KAMO
BLOG



Երևան, 2018
Թուղթ, տուշ
50 x 50 սմ

Yerevan, 2018
Chinese ink on paper
50 x 50 cm



Ինքնադիմանկար, 2018
Թուղթ, տուշ
21 x 29.7 սմ

Self-portrait, 2018
Chinese ink on paper
21 x 29.7 cm